

պէս՝ որ նոր արձակած են փանրակէն՝ թեւերը բա-
 նալու փորձեր կ'ընէր: Կայուածքները ծիշտ առ-
 ջնւք՝ քայլերը կը հսկէին: Հարթ գետնին վրայ ա-
 նոր քայուածքը կը նձանէր լարախաղացի ձը քալ-
 ուածքին, բարձր լարին վրայէն, որ հաւասարակըշ-
 ութեանը համար պէտք ունի թեւերը բանալու, ու-
 շտղորութիւնը լարելու՝ սաքերուն ծայրերուն վրայ:
 Տղուն կլոր ու վարդափայտ գէճքը կը ճառագայ-
 թէր: Ինչէ՞ն կրցաւ հետեցնել թէ իր պղտիկ Պետ-
 րոսն էր: Հետեցնելու ժամանակ չունեցաւ: Այս
 փոքրիկ էակին ճիչերը անանկ անբացատրելի բան
 ձը ունէին որ Պետրոսի սիրտն ու աղիքները սեղ-
 ճուեցան, կծկուեցան: Անոնք բան ձը ունէին իրենց
 ձէջ, որ կը յիշեցնէին կորուած հայրը գոնող ար-
 դուն ճիչերը: Անկեղծութիւնը ձը ձէջ Պետրոսի ամ-
 բողջ ճարձիւնը հիւլէ հիւլէ կաթեցաւ տիեզերքի գո-
 զը, ճամբորդեց ճովէն երկինք, երկինքէն ճով, ու
 համբուրելով Տիեզերքի հոգին՝ եկաւ վերակազմել
 զինքը, իր պատահանին առջեւ, իր փոքրիկ Պետ-
 րոսին գէճ, ինչպէս արեւը՝ երկրին: Տղուն անաս-
 ճան ու անարակելի զուարթութիւնը կը վարակէր, կը
 դրուէր զինքը: Կեանքին վերադարձը պիտի ըլլար

ճիւղին աղան՝ այդ անպատճելի զուարթութեան ճա-
 ուղայթմներուն ճամբայով: Եւ սկսաւ կանչել աղան
 նոր նոր անուններով, առանց շրթները բանալու, իր
 ձէջէն, թեւերը երկարած, աչքերը խոշոր, ուտեղերը
 բացած: Բայց վայրկեան ձը կրցաւ անդրապառնալ
 թէ հոտ չէ՞ր իրապէս դիւահարուծի ձը նշանը՝ հիմ-
 նել իր աշխարհը երեւակայածին կարծիքներու
 վրայ:

Կատուի ճագ ձը կը գտնար աղուն շուրջ,
 ճլուակով, ոտքերուն քսքսուելով: Տղան չարածձի
 քմահաճոյքով ձը բռնեց կատուին ճագը վզէն եւ
 վազելով վերադարձաւ դէպ ի դուռ՝ "Մամա՛, մամա՛"
 ուրախութեան ճիչերուն հետ: Հաղիւ Պետրոս յիշեց
 թէ ինք ալ ճանկութեանը սիրած է եղեր տանջել
 անասունները՝ երբ Լիզա երեւաց: Ահաւոր աղաղակ
 ձը պատուեցաւ Պետրոսի կուրծքին ձէջ, ինչպէս
 Պոլիփէճի աղաղակը՝ անտառին խորքը: Եւ կայծա-
 կի շարժումով ձը գէճքը վարագոյրին ետեւ պահեց:
 Բայց այդ վայրկեանէն իսկ արդէն, այդ զիկզակ
 շարժումին հետ, անոր ուղեղին ձէջ արձանագրուե-
 ցաւ ճակատագրական վճիռը:

Մարտի 11, 1931 ՉԵՐԵՀ ՈՐԹՈՒՆԵՒ

Բ Ն Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն Ա Շ Ո Ւ Ն Ի

Ա . — Շ Ր Ա Ի Է Ր Ը

Աշուն: Այգին սոկեմառ պարտէզ մըն է հընապեղ
 Ուր կը ծաղկի բերկրաւէտ երազին վարդը կարմիր.
 Թափանցիկութիւնն ըստուերին մոլորչի ծով մ'է լուսեղ:
 Հովուաարիւղիգ-երգերով եթէ ճամբէն անցնէիր.

Շերտափակին վըրայէն կը նետէի քեզ համար
 Անոյշ խնձոր մ'հատուցած արեւին մէջ կէսօրուան.
 Եւ արիշէն սրուն վրայ կան մ'եղուններ անհամար,
 Կ'ունենայիր քու բաժինդ սղկոյղներով կարկեհան:

Բ. — ԽՆՁՈՐԵՆԻՆ ԳԵՂԵՑԻԿ

Խնձորենին գեղեցիկ իր սասերով ծանրաբեռ
 Հնգիկ ամճար մ'է գողցես կարմիր փոքրիկ ջահերով.
 Ես Արեւին կ'աղօթեմ, երբ իր սակին է ծաղկեր
 Ծիածանի մը հանգոյն աղբիւրին վրայ շողալով:

Ես Արեւին կ'աղօթեմ, իր բոցերուն հրահոսան
 Բըլուրներէն ծաղկազարդ մանիշակի քրքումի.
 Ականջներուս մէջ թրթուռն ժիր մեղուներ կը բզկան,
 Ճեղքըլած հուռ մ'այգիէն սրտի մը պէս կ'արիւնի:

Գ. — ՍԻԿԻԼԻԱՑԻ ՊԱՏԱՆԻՆ

Մոռցար մ'եռած այն արզան, սիկիլիացի պատանին
 Որուն աչքերը ծաւի խորունկ էին ծովի պէս,
 Երբ ան կ'անցնէր երգելով արահետէն այգիին,
 Երբ իրիկունն էր այնքան բուրումնաւէտ, կը յիշես...

Ես կը յիշեմ իր ծիծաղն եւ ակումներն ըստիտակ,
 Ու կը յիշեմ տխրութիւնն իմ հոգիիս այն ատեն.
 Երբ լըռեց երգը սիրոյ, հիմա բոսոր հողին տակ
 Մանիշակներ ծաղկեցան իր աչքերուն կապոյտէն...

Դ. — ԱՆՈՐ ԱԶՔԵՐԸ ԿԱՊՈՅՏ

Գեռ կը լըսեմ իր երգերն յիշատակի բոյրերով,
 Ու արամութիւնը հոգւոյս կը դաշնակուի ծառերուն.
 Լուռ վերջալոյսը կ'իջնէ լիճին վըրայ գողալով,
 Ու կը հեծէ մեղմօրէն ակի մը ձայնը հեռուն:

Այգիներէն ամայի կը բարձրանար մեղեգին
 Որ կորսըլած է հիմա ըստուերին մէջ անծանօթ.
 Այս իրիկուան հետ անցնող հոգիիս մէջ կը ժպտին
 Անոր աչքերը կապոյտ, անհունօրէն երազիտ...

Ե. — Պ Ա Ր Ը

Եկո՛ւր լեցնենք այս կողովն հիւսուած լացող ուռիէն
 Խնձորներով մշկաբոյր ու վունջերով ծոթրինի.
 Բըլուրին վրայ տըղաներ զըւարթագին կը պարեն,
 Արեւին մէջ իրիկուան՝ արձանօրէն հոլանի:

Տե՛ս, ի՛նչ խնձիղ մը վըճիտ կը բարձրանայ խօ՛լ պարէն,
 Երբ տըղաներն սսկեգօծ մարմիններով արեւոտ
 կը նետեն աջ ոտքերնին եւ ձեռքերով կը բռնեն.
 Եկո՛ւր, գիտենք իրիկունն իմ այգիիս դուռին մօտ...

Զ. — Բ Ո Ւ Ր Մ Ո Ւ Ն Ք

Որպէս զի դուն գեղեցի՛կ ըլլաս, տարփոտ մարմինով,
 Պիտի քաղեմ՝ քեզ համար ամենաբարձրը ճիւղէն,
 Խնձոր մ'աշնքան մեղրաւէտ որքան համբոյրը գինով
 Մեխակի՛ պէս կարմրավառ շրթունքներու հըրեղէն:

Պիտի սրահես մշկաբոյր խնձորը ջերմ հեշտանքով
 Ծիծերուզ վրայ մինչեւ լոյս, եւ առաւօտն երբ ծագի,
 Քու պաշտելի մարմինէդ պիտի բուրեն սիրաթով
 Արշալոյսին քրքուճներն ու մեղկ աշունը սսկի...

Է. — Ա Ր Ե Ի Ի Ն Յ Ա Ղ Յ Ա Ն Ա Կ Ը

Եկո՛ւր, գիտե՛նք սայլերուն անցնիլն, երբօր կ'արթնան
 Տկճորներու երգերով հին թերափները բարի,
 Արմըկայեց կ'երագէ լուռ Տխրութիւնն իրիկուան
 Սիւնամոյթի մը վըրայ բաղեղներով սսկելի:

Անգօրը ճամբէն զօր Աշունն է բոցավառ հինայեր,
 Պոչիւնն հիմա կ'երկարի հեզընթացիկ եզներուն,
 Դէպի հնձանը գիւղին. եկո՛ւր, գիտե՛նք ցնձաբեր
 Գեղեցկութիւնը կեանքին՝ գերդ Յաղթանակն արեւուն...

Ը. — Վ Ա Ր Դ Ե Ր Ը

Վարդերն հիմա կը թօշնին, այգեկուլթքի վերջընթեր
 Այս միջօրէն, երբ հնձանն է բերքերով առլըցուած.
 Առարւան հովը ծառին բոլոր խնձորն է թափեր,
 Ու գողցես հողը կարմիր թաւիշով է ծածկըւած:

Այսպէս առանց քաղուելու վարդերն հիմա կը թօշնին,
 Ա՛հ, մեր սէրն ալ անոնց հետ, կը թառամի շուտափոյթ.
 Գեռ պըսակի մը համար քաղե՛մ՝ վարդերն աշունին,
 Ու համբոյրի մը համար մեխակն աղուոր շրթներուդ...

Թ. — Վ Ե Ր Ջ Ի Ն Խ Ն Ջ Ո Ր Ը

Տերեւաթափն է ոսկի՝ վերջալոյսով մը կապոյտ,
 Այգեկուլթքն է վերջացեր, եւ ամալի բլուրներէն
 Ծիծաղին մէջ անասման քու հովուերգակ շրթներուդ
 Հայրենաբաղձ սրբինդի ձայն մը կուլայ մեղմօրէն...

Հազիւ պատտան մը ծաւի կը ցոլացնէ երկինքէն
 Տերեւներով մը թամած աղբիւրներուն հայելին.
 Բարձրը ստի մը վըրայ զոր բաղեղներ կը ծածկեն,
 Խնձոր մը կայ սրուն ձեռքը չի հասեր կը թողին:

Ժ. — Ս Ա Փ Փ Ո Վ Ի Ն Հ Ա Մ Ա Ր

Եկո՛ւր, խնձորն այգ քաղե՛նք Յիշատակին ի խնդիր
 Քաղցրաքընար Սափփովին որ զայն երգեց՝ ըլլալով
 Անոր նրման գեղեցիկ, անոր նրման խնկալիր,
 Անհասելի տրամօրէն իր հոգիին աշունով...

Իր սէրն եղաւ անոր պէս բարձրը ստի մը վըրայ
 Որուն հասաւ ցրտօրէն անողոք աջը մահուան.
 Եկո՛ւր, խնձորն այգ քաղե՛նք Յիշատակին սիրահմայ
 Քաղցրաքընա՛ր Սափփովին զոր Աշունները կուլան...

ԺԱ. — Գ Ա Դ Ի Շ Ն Ե Ր Ը

Հոն գաղիշները հիմա կը բարձրանան հասկաթուռ,
 Բըլուրն իրենց սակեղէն ծանրութեան տակ ճնշելով,
 Կ'իջնէ արեւը գիւղին հրդեհելով ամէն գուռ,
 Արիւնսներկ է ջրարբն իրիկնային շողերով:

Գաղիշներու ճամբուն վրայ քեզ հըրայրքով անպատու՝
 Կուրծքիս վըրայ սեղմեցի, եւ տարփազեղ մարմինով
 Հասկերուն մէջ կեանքին ոյժն, արեւին սէրն էիր գուն.
 Ու կարօտով անսահման տըխուր է սիրտըս գինով...

ԺԲ. — Հ Ն Զ Ա Ն Ի Ն Մ Է Զ

Խաղող ճմլող ոտքերուդ անոյշ պարերդ մը գիտեմ,
 Դարձի՛ր, մեղուն սակեթեւ կը մօտենայ շրթունքիդ.
 Քու շրթունքներդ կարմիր ուրախութեան ժրպիտէն
 Վարդի նրման կը ծաղկին, երբոր զըւարթ է հոգիդ:

Որբա՛ն, որբա՛ն կ'ուզէի, երբոր աչքերդ կապոյտ
 կը ծիծաղին երկնաւէտ լիճերու պէս թափանցիկ,
 Խաղող ճմլող ոտքերուդ, ալապատարէ ոտքերուդ
 Սիրտըս բերել իբր ընծայ՝ նուռի մը պէս գեղեցիկ...

ԺԳ. — Թ Ե Ր Ա Փ Ն Ե Ր Ը

Ակութին մէջ վառեցի կըրակն եւ գունն ահա՛ բաց
 Ուղեւորին կը սպասէ երկար ճամբէն պարտասուն.
 Լոյսը խոնարհ ճըրագին աստղի նրման սլալըլաց,
 Արդէն սեղանն է պատրաստ, եւ սափորները լեցուն:

Իմ հովուական սրնդէս մէջ աղբիւրին ձայնը կուլայ,
 Առկախեցի նոր հասկեր գուռին վերեւ հայրենի.
 Ու թերափներ կը ժպտին, երբ իրիկուն է հիմա,
 Բուրումնաւէտ իրիկո՛ւնը բերքերով Աշունի...:

ԱՐՍԷՆ ԵՐԿԱՔ